## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացել է հետևեալ գրքերը.

1) Г. Халатьянцъ: Очеркъ исторіи Арменіи. Москва 1910.

2) Н. Марръ: Грамматика Чанскаго (Лазскаго) языка съ хрестоматіею и словаремъ.

3) Կ. Կոստանեան. Հայագիտութիւնը արևմտեան Եւրոպայում. Թիֆլիս 1910.

4) Ա. Չօպանեան Նաղաշ Յովնաթան աշուղ և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը. Փարիզ. 1910.

5) A. Tchobanian. Chants populaires arméniens, Paris.

6) A. Tchbanian Les trouvères aıméniens. Paris.

7) Атрпетъ Бабиты и Бехаиты. Тифлисъ 1910.

8) Атрпетъ Рахимъ-ханъ сардаръ. Тифлисъ 1910.

9) Աղայեան, Ահարոնեան, Թումանեան և Փափազեան. Հայ գրողներ. Թիֆլիս։

10) Գ. ա. ք. Աղանեան. Եղիշէի պատմութիւն Վարդանանց. աշխարհաբար թարգմանութիւն. Թիֆլիս 1910 թ.

11) Линчъ, Арменія, пер. Джунковской, изд. Торговаго дома И. Е. Питоевъ и К°. Тифлисъ, 1910.

---

# ԱԶԴ

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻՑ.

՚Ի նկատի առնելով, որ հայ պարբերական մամուլի մէջ չափազանց շատ նիւթեր կան մարդաբանական բոլոր գիտութիւնների վերաբերեալ, Հայոց Ազգագրական ընկերութեան անդամ պ. պ. Ե. Լալայեան և Խ. Սամուէլեան տարիներից ի վեր կազմում են մասնաւորապէս Կովկասահայ և ընդհանրապէս ամբողջ հայ մամուլի բովանդակութեան ցուցակը, տալով իւրաքանչիւր յօդուածի բովանդակութիւնը և որակելով նրա գիտական արժէքը։ Այս, հազարաւոր թերթիկներից բաղկացած ցուցակը մինչև տպագրուիլը դրուած է Հայոց Ազգագրական ընկերութեան Կովկասագիտական-Մարդաբանական գրադարանում, որից կարող է օգտուել ամէն մի գրականագէտ։ Այս ցուցակը կարելիոյն չափ լրիւ դարձնելու, և որ գլխաւորն է, Ռուսահայոց մտաւոր կենտրոն՝ Թիֆլիսում պարապողներին միջոց տալու հայ պարբերական մամուլից օգտուելու, ընկերութեան Խորհուրդը որոշել է ամէն ջանք գործ դնել հաւաքելու իւր վերոյիշեալ գրադարանում հայ պարբերական մամուլն ամբողջապէս, եթէ, ի հարկէ, հայ հասարակութիւնը նպաստէ, այս պատճառով և Խորհուրդս խնդրում է թէ խմբագիրներին, թէ հրատարակիչներին և թէ մասնաւոր անձանց՝ կամ փոխանակել իրենց, ինչպէս նոր, այնպէս և հին, հրատարակութիւններն ընկերութեանս օրգան Ազգագրական Հանդիսի հին և նոր գրքերի հետ և կամ նուիրել ընկերութեանս գրադարանին։

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան.

Թիֆլիս.